

18027

891.99

4-30

ՏԻԿՐՍԸ ՎԱՐԴԱՆԵԱՆՑ

(70)

== Ա Ր Զ Ա Կ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ==

2003

Տպարան Ա. Ապրեսիանցի Ատուրախան

1919

89199

Կ-30

4063

891.99

4-30

W

Կուռքը կործանուած չէր և ամբողջ.
Դու կառուցիր այդ կուռքը և դու
կործանեցիր նրան.

Կոյր, մոլորուած ամբոխ.

Երբ դու կառուցանում էիր քո կուռքի
արձանը, ես այնտեղ էի:

Ես տեսայ, թո մոլեռանդ կերբը, որո-
տալի խօսքէրը.

Ես տեսայ շքեղ հանդէսներ, ոգևո-
րութիւն, պար, ծիծաղ, տրտասուք և լաց:

Ես տեսայ քո կուռքի առաջին զոհա-
բերուած բերաւոր անմեղների կարմիր ա-
րիւնք վտակի նման հոսելիս:

၆၈၂၃ ယာ်ပတုၤ.

Մամուկեցի Կա:

Դու յագիցար ապա. նոր կիրք, նոր
խիհնդ, նոր կեանք պահանջելու կարիք
դպաց քո սիրտը:

Եւ դու փորձեցիր ապրելու, պաշտելու
նոր ձևեր, նոր կուռքեր, նոր կուլտ որոնել.

Դու վերցրիր մուրճը եւ խորտակեցիր քօ
կողոքը, որի առաջին անջաւն դարեր դա-
ժնկաչափ խուսկ էիր ծխիկ երեսդ դեմքի-
քսելով:

Դու չը գիտակցեցիր, որ քո կուսակց
երկ խեցեղէն անօթ է հղել և ուրիշ սչիհնչ:

၆၈၂၃ နံပါတ်.

Այդ միևնոյն գու մուրճով ոկսեցիք իմ
ձոր հուռք կերտել կառուցանել ընդ համարը

2

Ես այնտեղ էի և դիտեցի քո չարա-
շար աշխատանքը

Ես տեսայ նոյն մոլեռանդ կիրքը, ո-
րոտալի խօսքերը.

Ես տեսայ նոյն փարթամ հանդես-
ները, ոգևորութիւն, խինդ, ծիծաղ, արտա-
սուք ու լաց:

Ես տեսայ նոց կուռքի առաջին զո-
հաբերուած բիւրաւոր անմեղների կարմիր
արիւնը վտակի նման հոսելիս:

Եո տեսայ ու բացականչեցի.

Կոյր տմբոխ

Երեկ շինեցիր, այսօր կործանեցիր.

Այսօր շինում ես վաղը կործանելու
նպատակով.

Ո՛ւր է սրա վերջը.

Երեկուայ, այսօրուայ, վաղուայ կուռ-
քը-կուծիրը, միևնոյնն է, միևնոյնը.

Նա լոկ անօթ է խեցեղէն.

Նա անզգայ կուռք է միայն.

Մին յեւ դարձիր, մարդ արարած, և
քեզ վերայ նայիր.

Դու ես քո կուռքերի, քո աստուած-
ների ստեղծագործողն ու արարիչը.

Դու քո մէջը կանգնեցրու քո կուռքը,
քո աստուածների տաճարը.

Եւ նրան անկարող կը լինեն խորտա-
կել ոչ մութքը և ոչ էլ ժամանակը:

Ճ Ր Ա Գ Ը

Մո՛ւթ էր.

Մի անտանելի մո՛ւթ գիշեր.

Ինձ ախպէս էր թուում, թէ այլևս ա-
րեւ երբէք չի ծագելու և մենք առաւօ-
տեան վառ արշալոյսին կարօտ ենք մնալու:

Աչքիս՝ առաջով անցնում են սև-սև
ուրուականներ. ակննջիս չարագուշակ ձայ-
ներ են հասնում:

Ահարեկ երկիւղը սիրտս է համակում.
Ես դողում եմ անից.

Մո՛ւթ է, սմակալի մո՛ւթ գիշեր.

Ցանկարձ մի լուսատու կայծ թռչում
է աչքիս առաջով, նա իմ չրուած հոգու մէջ
յուսոյ նշոյն է ծագեցնում, և ես շունչ
ու ողի տուած ցնծագին աղաղաղում եմ.

— Լոյս, լոյս.

Արդէն ճրագը վառում է սենեակումս.
Սմառն է և սաստիկ շոգ, գիշերային
օդը մանաւանդ հեղձուցիչ:

Պատուհանս բացում է փողոցի վերայ
Չանցաւ ակնթարթ.

Եւ ինչ զարմանք.

Փոշոտ, կեղառտ փողոցի կողմից բաց
պատուհանով ներս խուժեցին իմ սենեակը
մոծակներ, ճանճեր, հոյլը մփեղներին...

Եւ իմ լուսատու փայլուն ճրագի շուր-
ջը սկսուեց դարչ ու զազիր միջատների մի
կատաղի նախճիր-խրախճանք.

Հողմակոծ փսթսրկի նման ոլորվում էին նրանք ճրագի շուրջը, ընկնում էին, նորից բարձրանում, կրակի վերայ այլում խորովում:

Իսկ բաց պատուհանով փողոցի կողմից նրանց շարքերը գալիս էին անվերջ, անհամար:

Դա նրանց աստուծու տոնն էր, որի սեղանի շուրջը պարում էին նրանք և որի սեղանի վերայ ողջակէզ էին անում իրանք իրանց:

Սենեակիս մութ անկիւնի մաշուած յատակի ձեղքերից դուրս են սողում ուղաներ, ձիճուներ, կարիճներ. և ամենքը սողում են դէպի լոյսը, դէպի ճրագը:

Ես յուսահատ բեկբեկում սրտով ձեռքս դէպի ճրագը տարայ և հանգցրի նրա լոյսը:

Սաւարը թագաւորեց իմ շուրջը:

Վայրկենաբար ամեն ինչ լուս-դաւա-րեց և ինձ այլևս խածոգ ու խայթող չկար:

Սաւարը թագաւորեց իմ շուրջը և համակեց իմ միտքը դառն մտորումներով:

Իմ ճրագի աղօտ լոյսը միայն գարշ ու զազիր արարածներին կարողացաւ դէպի ինքը քաշել-գրաւել:

Այո, միայն այսքանը:

Չէ, մտածեցի ես, մի ճրագով գիշերային խաւարը ճաճանչափայլ ցերեկ չի դառնայ. պէտք է սպասել առաւօտեան արշալոյսից յետոյ՝ լուսաշաւիղ տրեգական համատարած պայծառ լոյսը ծագելուն:

ԿԵԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Դու հարցրիր, դու փորձեցիր իմանալ ի՞նչ բան է կեանքը ու գաղտնիքը նրա. բայց չիմացար: Ոչ գիտունը աշխարհի, ոչ փորձը, ոչ հանձարն ունեցան հնար քեզ լուծելու գաղտնիքը կեանքի:

Ո՞վ քննեց ծագումն աշխարհի, խորհուրդը մարդու. ո՞վ չափեց անիւը կեանքի. Ո՞ւր գնում, ո՞ւր գալիս, ո՞ւր հանգչում շարժումն ազգերի:

Կարծում ես կոյր բաղդը, թէ միտքը գիտունի է բաց անում, հարթում ճանապարհ մշտաշարժ յարաճուն կեանքի յաղթական ընթացքի առաջ:

Այդ քո մեծ հարցերին բնաւ չի տայ պատասխան ոչ մի բան, ոչ ոք. Ո՛չ փորձը դարերի, ոչ հանձարն աշխարհի, ոչ գիտունը ազգերի:

Միայն ես, լաւ լսիր, միայն ես, մի թերուս թշուառ ծերուկ կարող եմ լուծել քեզ գաղտնիքը թագուն, որ դարեր շարունակ մնացել է անյայտ ու ծածուկ գիտունի աչքից:

Դէ, լսիր պատմեմ. յիշում եմ մանուկ հասակից ես մի կիրճ մեր գիւղի մօտին, խոր ձորի մէջ ընկած երկար ու երկար. Ոլոր ու մոլոր նա անցնում էր անդունդի միջով:

Ներքևում գետն էր կատաղի գորգոսում, փրփրում-մանչում. Բարձրում մի նեղ շերտ կապուտակ երկինք. Իսկ ուղին առջևդ ծալծլուն, սև օձի նման:

Երկու քայլ առաջիկ, խորխորատ ձորում, չի երևում ոչինչ, մի գլիժ է միտյն սև է, թէ սպիտակ, որ քաշում է քեզ որպէս մի հզօր մագնիս դէպ յառաջ, յառաջ...

Եւ շարքը քառաձի լծած քո կառքին, կատաղի թափով վստահ իր ուժին՝ թըռում է յառաջ:

Չկայ ոչ ահ, ոչ կասկած ցուստոջ վախ քո աչքերում, և դու յանգուզն, համարձակ փարում ես քո կառքը, քառաձի լծած:

Ո՛չ գետն ամենի, ո՛չ պատերն սպառաժ, ո՛չ երկինքն անեղ, որոտ ու կայծակ չեն կարող լինել վիհ կամ պատնէշ քո յաղթական դնացքի առաջ:

Մըտումդ միշտ յոյս, սէր, կիրք, խանդ ու հաւատ դու ամբարած, իսկ աչքիդ առաջին մի նեղ գլիժ բռնած՝ անվախ, աներկուղ, թռչում ես յառաջ:

Դէպ անյայտ ապագան, դէպ հեռու յոյսեր, մեծ հաւատով, խիզախ ու անվեհեր առանց յետ նայելու թռչել ու թռչել անվերջ.— անձ քեզ, բարեկամ ազնիւ, դաւբաւոր զաղտնիքը կհանքի:

ՎԱՐԴՆ ՈՒ ԱՂԶԻԷԼ

Ես անցնում էի.

Ճանապարհի կողքին մի թուփ էր բուսել և թփի գլխին նոր կոկոնի միջից բացուել էր վարդի փարթամ ծաղիկը:

Ես մօտեցայ, հոտոտեցի վարդը ու նստայ հանդչելու թփի տակին, որ սառուեր էր ձգել իր արմատները սնուցանող աղբիւրի պաղպաջուն ջրերի վերայ:

Նայում եմ.

Անցնում է մի ուրիշ մարդ, նա տեւաւ բացուած վարդը ու չհամբերեց, մօտեցաւ, կուցաւ, մի կուշտ հոտոտեց, ապա ինքնագոհ ժպտով հեռացաւ դնաց:

Իսկ վարդն աղբիւրի գլխին կասեա էլ աւելի էր փայլում, էլ աւելի գեղգեղում:

Նայում եմ դարձեալ.

Ահա անցնում է մի երրորդը, չորրորդը, հինգերորդը... ամենքը յազնաժ, ամենքը տապից թուլացած, նրանք մօտեւում են աղբիւրին, սառն ջրից խմում, վարդից հոտ քաշում, տակին հանգստանում ու կազդուրւած նոր ուժով կրկին ճամբան շարունակում:

Եւ վարդն էլ աւելի է բուրում, էլ աւելի գեղգեղում:

Բայց ես նստած եմ տակաւին ող-
բիւրի մօտ և նայում եմ:

Ահա ճանապարհի վերայ երեցաւ
դարձեալ մի մարդ. սա մօտեցաւ, տեսաւ.
վարդը աղբիւրի գլխին. ինչ միտք անցաւ
նրա գլխով-դա ոչ ոք չգիտէ, միայն նրա
սիրտը բորբոքուեց, կիրքը շարժուեց ու
աչքերը կրակ կտրած՝ ձեռք ձգեց ու վարդը
քաղեց իր թփից, նա վայրենի կրքով վար-
դը մօտեցրեց շրթունքներին անյազարար
հոտոտեց մի քանի անգամ, ապա սեղմեց
շրթունքներին, կրծքին, դարձեալ հոտոտեց...
ու գէն շարտեց մեծ ճանապարհի վերայ:

Եւ ալ-ալւան վարդի սիրուն թերթիկ-
ները՝ տրորուած ու թորշոմած, ցիր ու
ցան ընկած փոշու մէջ՝ ոտնակոխ դարձած,
կորչում էին անհետ, անգարձ...

Եւ անցորդը կարծես կիրքը յագե-
ցրած առաջ էր գնում անհոգ, անհոգի:

Ես նստած նայում եմ, և գլխումս մէ
միտք է շրջում:

Մեծ ճանապարհի վերայ, պաղպաղուն
աղբիւրի գլխին բուսած վարդը-այդ դու ես
քոյր իմ աղջիկ:

Երբ դու թփիդ վերայ հպարտ գեղով
և բուրում էիր և ժպտում, շատերն եկան,
երկիւզած տենչով հոտ քաշեցին ու քո կա-
քաւ քաշելով օնցան գնացին... Բայց անձ

եկաւ մէկը անգուլթ ու յանգուիքն քեզ քա-
ղեց թփից. սեղմեց շրթունքին, կրծքին,
տրորեց ու կոպիտ ձեռներով վայր գլորեց
մեծ ճանապարհի վերայ...

Մայր թփից քաղուած, օտարի ձեռ-
քում շարդուած, տրորուած ու խամրած
վարդը այդ դու ես, դու, քոյր իմ աղջիկ:

Ն Ա . Զ Ա Ր Թ Ն Ե Յ

Շարժուեցան կամարանման բարակ
յօնքերը, և նրա շուշանի դէմքի վերայ
փայլեց գեղանի ժպիտը.

Նա դարձնեց.

Նա բաց արաւ սիրուն աչքերը և
խանդոտ հայիացքով ինձ վերայ նայեց.

Ես ինձ հնկատեղու դրի.

Նա գեռ չգիտէր, որ սիրոյ կայծն իմ
մէջ գէպի ինքը հանգել էր արդէն.

Ես կեղծում էի.

Թխպոտ ամպ անցաւ նրա դէմքի վե-
րայով և դեղձիմազ անուշ ժպիտը ընդ
միշտ չքացաւ նրա մատաղ շրթունքներից:

Ես չուզեցի նկատել այդ ու դուրս
նայեցի դէպի փողոց.

Դիւ վաղ էր, մարդիկ քիչ էին երևում:

Ամառնային թիթն շղարշի մէջ անփոյթ պճնուած, վարդը ձեռին անցնում էր մի չքնաղ աղջիկ:

Նրանից մայիսեան թարմութիւն էր բուրում. նա գեղեցկութեան մարմնացումն էր ամբողջապէս:

Ես նայում էի նրան:

Աչքերս չէին ուզում կտրուել նրա յետիւց:

* * *

Մետաքսեայ բարակ վերմակի տակից նոր զարթնող գիցուհին խոնար աչքերը կրկին դէպի ինձ դարձրեց:

Ես ինձ չնկառելու դրի:

Նա լալիս էր:

Նրա հեկհեկանքը, սենեակի մթնոլորտը, նրա գեղեցկութիւնը իմ մէջ զըզուանք, տտելութեան զգացմունք էին տուալ բերում միայն:

Ես սենեակից դուրս վազեցի դէպի փողոց և խելայեղ փոթորկի նման սլանում էի դէպի այն կողմը, ուր անհետացաւ թափանցիկ շղարշի մէջ փաթաթուած նազանի աղջիկը ալ-վարդը ձեռին:

* * *

Չգիտեմ, ես կըր տուն վերադարձայ, իմ սիրտը ակամաօրէն նորից դնելու խանդող աչքերի սուր սլաքների տակ, բայց գիտեմ, որ արդէն շատ ուշ էր:

Առնուտն էր բացւում:

Հրաշալի մայիսեան տաւալ:

Ես կանգնած էի նրա մահճակալի մօտ, դարձեալ բայց պատուհանի առաջ:

Յակոբն այս անգամ ոչ թէ դէպի դուրս, այլ դէպի նրան էի յառել անքնութիւնից բորբոքուած աչքերն:

Բայց այլևս չ'շարժուեցան կամարանման բարակ յօնքերը և շուշանի նման սպլտտակ դէմքի վերայ այլևս չը փայլեց գեղանի ժպիտը:

Նա չզարթնեց այլևս:

Ես լալիս էի:

Նա լսել էր յաւիտեան:

Իրանդ եմ ես, հիւանդ:

Ինձ նման հիւանդ էք և դուք ամենքը, ամենքդ...

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ

Մուժն ընկաւ, ու լոեց սոսկալի ժը-
խորը արիւնով ներկուած ռազմի դաշտում,
և Վահագն անաւոր Մասիսի գապաթից զի-
շերուայ պահուն կռուի դաշտ իջաւ:

Նայեց նա դէս ու դէն ու արծուի աչ-
քերով ամեն բան դիտեց և հրճուանքով
գոռաց. Բաջիրս, դուք ընկաք մեծ փառքով,
քաջարի զէնւորի վեհ հերոս մահով. ես ու-
րախ եմ, հրճուեմ է հոգիս, երբ տեսնում
եմ կտրիճ զինուորներ քով ի քով ընկած:

«Ուրախ եմ, ցնծում է հոգիս, երբ դի-
տում եմ ջարդուած այլանդակ մարմիններ,
զանկեր, երբ շօշափում, տեսնում դիակներ
կասկարմիր արեան մէջ յօշոտուած, սա-
ռած»:

— Դու Վահագն, ոճրագործ որդի—
Դա հայրն երկնքի Արամազդն էր մեծ, որ
ահեղ ձայնով որոտաց. գոռաց.— Այս ինչ
աւեր դու գործեցիր, այրեցիր, ջարդեցիր
ու լացով դու լցիր իմ սիրած վեհ սիրուն
աշխարհ. Մեծ սիրով ես մարդուն յղացայ,
անուցի սրտիս տակ, երկնեցի ու բերի
աշխարհ:

Նգովք, անէմք քեզ, Վահագն իմ
թշուառ որդի, շարունակեց ցասումով լրց-
ուած հայրն երկնքի Արամազդը մեծ. — Նը-

զովք քո անուան, որ բերիր թոյնը մահու
ու լցիր նրանով իմ փայփայած, իմ գուր-
գուրած այս սիրուն աշխարհ:

Վաղ առաւօտ արշալոյսին նոր արեւը
ծագելիս Աստղիկն ու Անահիտը ըստ հինա-
ւուրց կարգի ձեռք ձեռքի տուած՝ քաղ-
ցրալուր երգով երկնքից մեր երկիրն իջան.
Բայց երբ տեսան նախկին Նգեմն աւեր ա-
ւերակ՝ սրտի դառն կսկիծով արտունջ
հանեցին:

«Թող անցնի Մասիս, թող կորչի եր-
կինք. պատառուիր անդունդ ու աշխարհ
կլանիր այս ինչ սոսկալի պատկեր անա-
ւոր-անթիւ դիակներ փռուած սար ու ձոր
անխնամ, անտէր»:

«Իսկ մենք մութ գիշերով, երբ ան-
ցանք հապճեպ երրեմն շէն գիւղ ու քաղա-
քով ամեն ինչ այնտեղ մենք դատարկ գը-
տանք. լաց, կոծ աղեխարշ, սուգ, շիւան
սաներում ամեն տեղ, ամեն ժամ հնչում էր
անվերջ»:

«Դու հայր Արամազդ, էլ ռւր է ծիծաղ
օջախի շուրջը, սէր, գգուանք ու ժպիտ, որ
իրբե պարգեն երկնքի դու տուիր մարդուն.
Ձէ, հայր Արամազդ, դառն է, շատ դառն
այս աշխարհ, որ առար ու տուիր մարդուն»:

Խոժոռեց հոյակապ դէմքն Արամազդ
ու բռնեց երկունքով կրկին. Վերջին ան-
գամ նա խօսեց այսպէս.— Կը գործեմ հը-

բաշք, իմ սիրուն զստերք, ձեր սիրուն հա-
մար ու կերթամ այստեղից անդարձո:

Ասաց, որստաց, կայծակ ու սրտա,
տարերք աշխարհի նա խառնեց իրար. Ա-
նէճք, անէճք եմ տալիս իմ թշուառ որ-
դուն, արիւն ու չրակ խեղճ մարդու գլխին
յաւիտեան թափող վահագնին օտոր:

Եւ մթնեց ու կրկին բացուեց բարի
լոյսն առաւուն: Արեւն ելաւ. Ի՞նչ քաղցր,
հոգեզմայլ վեհաշուք պատկեր, ոտք ու ձոր
հագած են զմթնախտի զրահ, զսնդգոյն
ծաղկունք աննման բոյրով քով ի քով
փռուած. Ձկայ արիւն, ոչ զխակներ, ոչ գէշ
ու լէշ, ոչ հոտ ճենճերային, ոչ ճիւղ ու
շիւան:

Դա Արամազդն է-հայրն երկնքի, որ
վերջին անգամ երկնեց ու հոտած դիակ-
ներից իր զստերք համար ստեղեց խնկի
բուրմունքով ծաղիկներ անուշ:

ԱՍԱ. ԴՈՒ ԻՆՁ

Ասաց, դու ինձ, նախշուն աղջիկ, մի
թագցնիր ինձացից. ասան, երբ ես գողցել
այդ զոյգ աստղերն երկնքից, որոնք այնպէս
շողուն փայլուն փողփողում են քո դէմքին:

— Ի՞նչ գործ ունիս, խիզախ տղայ,
մի պրպտիր դու դադանիքը իմ սրտի. Մի
մութ գիշեր ես մենմենակ գետի ափին
զբօսնելիս՝ փէրին էր այն բերել հեռու
կապոյտ երկնքից:

Ասա դու ինձ, նախշուն աղջիկ, մի
թագցնիր ինձանից. ասան երբ ես լսել
ալախօսիկ անուշ լեզուդ դու բիւրիւր
բերանից:

— Ի՞նչ գործ ունիս, խիզախ տղայ,
մի պրպտիր դու դադանիքը իմ սրտի. դա
սարե գեփեւուն է ինձ բերել վարդավառի
կլերակէին հարիւս համար ժամի գրան ես
ջանգիւլում երգելիս:

Ասա դու ինձ, նախշուն աղջիկ, մի
թագցնիր ինձանից. ասան դու երբ ես որ-
տեղից ես քաղել ու կպցրել զոյգ նաները
քո կրծքին:

— Ի՞նչ գործ ունիս, խիզախ տղայ,
մի պրպտիր դու դադանիքը իմ սրտի. Դա
զրախտից, մայր եւայի վարած-ջրած ծա-
ռիցն է՛մ եկել, թոյլ-բաղմել իմ կրծքին:

Ասա դու ինձ, նախշուն աղջիկ, մի
թագցնիր ինձանից. այդ որ խնկից, որ
ծաղկիցն է. անուշ հոտը, որ բուրում է
գեշեր-ցերեկ քեզանից:

— Ի՞նչ գործ ունիս, խիզախ տղայ,
մի պրպտիր դու դադանիքը իմ սրտի. վաղ

առաւօտ արշալոյսին վարդ-մեխակից, մա-
նուշակից ցօղ է շաղկել իմ գլխին:

Ասա դու ինձ, նախշուն աղջիկ, մի
թագցնիք ինձանից. ի՞նչ գոհարներ, ի՞նչ
վառ տենչեր, սուր սլաքներ, անուշ յոյզեր
ունիս պահած ծնունդ օրից քս սրտում:

— Ի՞նչ գործ ունիս խիզախ աղայ,
լուր հիմա. չես իմանայ դու այդ երբէք վեհ
գաղտնիքը իմ սրտի. բաւ է քեզ խիզախ
աղայ, ինչ տեսնում ես իմ ղէմքին, իսկ
ներսը — թո՛ղ ինձ. թող ինձ հանդիստ, այդ
տաճարն է իմ գաղտնի:

ԱՍԻ ՀԻՄԱ. ԵՍ ՈՒՐ ԳՆԱՄ...

Ասի հիմա ես հեր գնամ, ես հում ղի-
մեմ. ինձ հով կասէ ուղիղ խօսքը սիրոյ
մասին աշխարհում:

Ասի գնամ, ես հարցնեմ վարդի գովքը
այրուղ երգով գեղեր-ցերեկ միշտ գեղգեղող
սոխակին:

— Դու հարցնում ես ուղիղ խօսքը
սիրոյ մասին ինձանից. է՛յ, իմ սէրը, ա-
սաց նա, — դա չի օգնիլ քո դարտին: Վարդ
ու սոխակ — երկու տիպար — մէկը՝ երգի,

ջոյրի աշխարհում. մենք փափագում, մենք
կարօտում մէկ մէկու, բայց չենք արեւնում
չենք յագեւնում իրարուց. անհ, դու մարդ,
խոր գաղտնիքը միշտ անթառամ մեր սիրոյ:

Ասի հիմա, ես հեր երթամ. ես հում
ղիմեմ. ինձ հով կասէ ուղիղ խօսքը սիրոյ
մասին աշխարհում:

Ասի, գնամ ես անապատ քարին կը-
պած հէզ մենաւոր ճգնաւորին ու հարցնեմ
թո՛ղ նո պատմէ, ի՞նչն է կապում նրա
սիրտը օրիւ-դարիւր լուսից հեռու մութ
խորշերի սև քարերին աշխարհում:

— Դու հարցնում ես ուղիղ խօսքը
սիրոյ մասին ինձանից. ի՞նչն է արդեօք,
որ կապում է ցաւոտ սիրտս օրիւ-դարիւր
լուսից հեռու մութ խորշերի սև քարերի
աշխարհում: Դէ լաւ լինը. Բայց ես գիտեմ
չի գոհացնի իմ ասածը քո հարցին. ես այս
երկրի մութ խորշերից աչքս յառած պայ-
ծառ երկինք՝ միշտ որոնում, միշտ աղօ-
թում եմ անյայտ, ծածուկ Աստուծուն, որին
հչ ես և հչ մի մարդ ոչ մի վայրկեան զեռ
չի տեսել աշխարհում: Կապոյտ երկինք,
հէզ մենաւոր — մենք փափագում, մենք կա-
րօտում մէկ մէկու, բայց չենք տեսնում,
չենք յագեւնում իրարուց. անհ, դու մարդ,
խոր գաղտնիքը միշտ անթառամ մեր սիրոյ:

Ասի, հիմա ես հեր գնամ, ես հում
ղիմեմ. ինձ հով կասէ ուղիղ խօսքը սիրոյ
մասին աշխարհում:

մասին աշխարհում:

Ասի, գնամ ես մանկանոց, օրօրոցին դիմաց նստած ժպտուն երես ջահիլ մօրը հարցնեմ, աչքերն յառած ի՞նչ է գիտում; Բայ և նայում խելայեղ. ի՞նչն է արդեօք նրան զրգում; որ օրն է բուն մերթ խնդում է, մերթ լալիս. ի՞նչն է յուզում նրա սիրտը, երբ մանկիկը քնից զարթնել, փափլիկ թաթը առաջ պարզած՝ անուշ աչքով մօրն է նայում ու ժպտում:

— Դու հարցնում ես ուղիղ խօսքը սիրոյ մասին ինձանից. Ի՞նչն է քաղում իմ աչքերից և արտասուք և ժպիտ. ի՞նչ անոպառ, այդ ի՞նչ ցայտուն աղբիւր է նա, որ չի կտրում, չի դադարում ոչ մի վայրկեան ինձանում: Դու կը լսես ու ես գիտեմ, չես հասկանայ սիրոյ զաղանիքն իմ սրտի. իմ մանկիկս օրօրոցում— նա մի տերեւ, մի ծաղիկ է, որ պոկուել է իմ սրբոցից. ես կուզէի միշտ անբաժան միշտ միատեղ կրծքիս սեղմած գուրգուրէի, համբուրէի ու ապրէի յաւիտեան. ես կուզէի— ես սեբալէս որպէս այգում ծառ ու ծաղիկ, միշտ ծաղկէինք զալար-առոյգ ու ազրէինք յաւիտեան. . . Ահա, դու մարդ, խոր զաղանիքը միշտ անթառամ իմ սիրոյ:

Ասի, հիմա ես Բայ գնամ, ես Բայ դիմեմ. ինձ հով կասէ ուղիղ խօսքը սիրոյ մասին աշխարհում:

Ասի, գնամ ես հարցնեմ ետրին համար երազ տեսող, նրա սիրոց այրուղիաւուղ պատանուն. ասի, գնամ և հարցնեմ. «Այ պատանի, ամենից շատ դու ես սիրել, դու ես սիրուել աշխարհում. Դու ինձ լուծիր մեծ զաղանիքը, որ յուզել է, որ ցնցել է. կառավարել, կործանել է, ալիկոծել և ծերուէին և պատանուն և հարստին և աղքատին աշխարհում:

— Դու հարցնում ես ուղիղ խօսքը սիրոյ մասին ինձանից. ի՞նչն է յուզում, ալիկոծում թէ հարստի, թէ աղքատի թէ պատանու, թէ ծերունու սիրտը սիրով աշխարհում:

Ես քեզ կասեմ իմ զաղանիքը բայց լաւ գիտեմ, իմ այդ սէրը դու կանուանես՝ կիրք, յոյզ, զրգիտ, սէր զաւաճան խարուղ-խարդախ աշխարհում:

Ես սիրեցի մի գեղանի կոյս աննման, շքեղ, փարթամ, տալու-տուղձ որի նման կարծում էի զեւ չէր բուռել և ոչ մի վարդ աշխարհում: Օրեր անցան, նա թառամեց իմ գրկում. ես այդ ժամին զէնը տեսայ մի ուրիշ կոյս որ նոր էր բացուել, զարնան նման նազով ծաղկել պարտէզում. թողի մինը և գնացի ես միւսի յետից. անցան օրեր, նա էլ թոռմեց. ես տարուեցայ, ես արբեցայ խելադադար կրքոտ սիրոյ աշխարհում: Ես թռչկոտում, ես սաստատում մէկից-

մէկը ինչպէս թիթեռ որ դաշտի մէջ ծաղկից-ծաղիկ վազվզում է, նստում հանգչում, կրկին թռչում, կրկին յոգնում, բայց չի կանգնում ոչ մի տեղ:

Ես շօշափում ես արբենում, ես յագեցնում սիրտս սիրով այրող-կիզող կրակից. անհ դու մարդ, խոր դադտնիքը միշտ կեղանի, միշտ թառամող իմ սիրոյ...

Ե Ս Տ Ե Ս Ա Յ

Ես տեսայ, ինչպէս պիւճաշուք տան հոշակապ դռնով ծաղիկների մէջ թափուած արծաթագոյն դադազը յամբաշարժ թափուրով ուտերի վերայ դուրս բերին փողոց:

Տխուր էր օրը. երկինքն արտասուում. սե ու սուգ մտած, նորաստի ալբի, դու լալիս էիր. և արցունքն ուշերիդ էլ աւելի հմայիչ, կախարդիչ էր դարձնում մարմտուն գէմքիդ գերաշխարհիկ փայլ՝ ու հմայք:

Թախծոտ նուագախումբը յուզիչ շեշտերով հնչեցնում էր մահու սգերթը. տըխուր մեղեդին արծադանք էր տալիս նրան. դու լալիս էիր, դու լուռ հեկհեկում: Դա բնութիւնն ինքն էր հեկհեկում:

Դու քեզ երգուեցիր, երգուեցիր արեւ փայլով, ծաղիկների բոլորով. դու երգուեցիր քո դեռատտի կեանքի վառվռուն սիրով չմոռանալ, երբէք չմոռանալ նրան, որին դու այժմս ուղեկցում էիր դէպի դուռը մշտալուռ գերեզմանի:

Ես տեսայ ու ասացի. Սէրը—ամենասուրբը-նուրբը բոլոր գգացմունքներից կը թուով նոյնպէս և քո մէջ ինչպէս դալարը քաղած իր թփից ու վճիռ արցունքը քամած աչքերից:

Անցան օրեր: Արեւ մայրն էր մտնում. ծաղիկներով սփռուած թարմ հոգակոյտի առաջին չաքած դու տաք շրթունքներով ջերմաջն համբուրում էիր սառն գերեզմանը. դու կանչում էիր նորան, սակայն լուռ էր նա:

Փարթամ գանգուրներիդ ալիքները անհնազանդ խուրձերով թափուած էին հողակոյտի վերայ, և լիւնային զեփիւռը ազատ մեղմ ծփանքով օրօրում ու դուրդուրում էր նրանց իր նազանի քնքոյշ համբոյրով:

Դա գարունն էր բացուել, աշխարհ զարդարել. կեանքը եռում ու խայտում էր գերեզմանի շուրջը. երգը, խիչղը, ծիծաղն ու վայելք, սէրը սիրաբորբոք թագաւորում էր ամեն տեղ:

Ես տեսայ ու ասացի. Սէրը. ամենա-

սուրբը-նուրբը բոլոր զգացմունքներից կը
թոռմի նոյնպէս ինչպէս դալարը քաղած
իր թփից ու վճիտ արցունքը քամած աչ-
քերից:

Անցան օրեր. դու արդէն սպաղեղադ
հանել, դէն ես գրել քեզանից. ուխտովայ-
րում մենաւոր կաղնու տակ նուրբ շղարշի
մէջ դու լուռ շշուկով գրուցում 'էիր բա-
րեկազմ աղուամազ երիտասարդի հետ. Սիր-
աւղ արովում էր և ամօթխած աչքերդ հա-
մեստարար դու գեանին էիր յառած:

Երիտասարդը ժպտում էր քո վայելուչ
շքեղ հասակը, քո քնքոյշ զեղն ու նազան-
քը գերել էին նրան. դու բարձրիցիր հուր
աչքերդ ու նրան նայեցիր. ձեր վառ խան-
դառ ժպիտները հանգիպեցան իրար: Մնաս
բարձր, դու թարմ. գերեզման...

Եւ դուք աստղազարդ գիշերին, մենա-
ւոր կաղնու տակ, ջերմ համբոյրներով ձեր
նուիրական ուխտը կնքեցիք—Սիրելի ու
սիրուիլ յաւիտեան. երբէք հրաժանուիլ ի-
րարուց, մոռանալ աշխարհու: ամեն բան և
ապրել միմիայն իրար համար, ապրել մի-
միայն սրտակէզ սիրոյ համար:

Ես ահա այ ու ասացի.— Սէրը— ա-
մենասուրբը— նուրբը բոլոր զգացմունք-
ներից— կը թոռմի նոյնպէս, ինչպէս դա-
լարը քաղած իր թփից ու վճիտ արցունքը
քամած աչքերից:

Ե Ր Կ Ո Ւ Ս Է Ր

Մթին փոփոցում անտուն անտէրունչ
գու մեն-միայնակ թողնուած գոռ ճակատա-
գրի անտղոք բազդին լալիս ես, լալիս ան-
մեղ իմ մանկիկ:

Գիտեմ, քո մայրը—մատաղ մի այրի
—մի օր փառաւոր երբ պատանուն տեսաւ
բարեկազմ, խելակորոյս քեզ նետեց փոփո-
քունեց կրքի ու սիրոյ մեղսաւոր ճամբան:

Կանգնած դու խղճուկ օտարի դրան՝
լալիս ես լալիս զրկուած մայրական սի-
լուց, անուշ զգուանքից որ բաժինէ նոյն-
խակ գազանին, թռչնին վայրենի, օձին թու-
նաւոր, ծաղկին դաշտերու:

Պահ մի համբերի՛ր մանկիկ իմ սիրուն,
տոկն տանջուի՛ր, կրի՛ր անտեղի զրկանք-
ներ անվերջ, քանի քո մայրը ուրիշի գըր-
կում հանգիստ կը վայելէ յարեցած կրքից:

Կը դույ, հաւատան մի օր և քո մայրը
մատաղ՝ գրկից-դիրք անցնելով՝ կրքից յա-
գեցած, հիւժուած ու մաշուած, սրտով բեկ-
բեկուած կանգ կառնի ու կասի ինքն ի-
րան. «Մինչև երբ և դէպ մը»...

Կիրքը, հաւատան, սէրը սեռական՝ որ-
պէս մի ճրագ, ձէթը ցամաքած՝ կմարի յա-
ւիտեան նրա ուժառայառ սրտում, և նա

բըռած մոռացուած ամենից՝ քեզ կը յիշէ
կրկին, անմեղ իմ մանուկ:

Սէրը, հաւատան, սէրը սեռական կանց-
նի որպէս մշուշը դաշտերու, որպէս որոտ
ու կայծակ փոթորկոտ ահեղ ամպերու, իսկ
սէրը մայրական՝ որպէս մշտաբուռ զո-
քիւր պաղպաղուն, որպէս լոյսը պայծառ
արևու կը փայլէ յաւերժ-յաւիտեան:

Գ Ա Ր Ո Ւ Ն

Սովի ու քաղցի ճիրաններում, ձմրան
ցուրտ սառնամանիքին արտասուաթոր աչ-
քերով ճհ սարեր սիրուն, մենք սրտամաշ
հոգով երկար սպասեցինք ձեր լանջերի կա-
նաչը բացուելուն վարդ-մանուշակի ծաղ-
կելուն:

Մեր անուրջ-երազներ վերջապէս ե-
կան. դարնան արեւի տաք շողիւրի հետ, ճհ
սարեր անդին, բազմեցան ձեր կատարնե-
րին լանջերին դալար՝ ու կասես աշխարհք
խաւար՝ դարձրին զրախտ, զրախտ եղեմի:

Հագանք հալանիս տօնին Զատիկա-
կան խառ ու գունաշով, առանք ձեռներին
տաւիղ ու ծնծղայ, հրգով ու պարով եկանք
դէպի ձեզ, սարեր զարգարուն, շնչով հո-

դերուղիս դարնան դալուտը սիրով ողջունել:

Կեղծիք ու պատրանք. մենք ելանք
լեռներ, անցանք դաշտերով և ծառ ու ծաղ-
կանց փոխարէն գտանք մենք ամենուր
նեխուած դիակներ մանկանց, ծերերի, կոյ-
սեր յօշոտուած, և փոխանակ կարկաչուն
վտակների մենք տեսանք ծաղկանց վերայ-
ով վէտ-վէտ հոսելիս արեան կայակներ:

Բայց չէ՛ դա չէ՛ գարունը իմ սրտիս
սիրած. դէ՛ կորիւր աչքէս դու գարուն նո-
րեկ հեռու ու հեռու. դէ՛, եկ դու կրկին
ձիւն ու ձմեռ, ծածկիր աչքերէս սարերը
ներկած կարմիր արիւնով. լուա՛, դու մաք-
ցիր արիւնն ու գէշը դաշտերից և մեզ հա-
մար բեր դու մի նոր գարուն ծառ ու ծաղ-
կունք առանց արիւնի, առանց արցունքի:

Ծ Ո Վ Ի Ա Փ Ի Ն

Դու մի մեծ առեղծուած, գաղտնիք
ինձ համար. մտածում էի ու չէի հասկա-
նում, թէ ինչու էիր դու քաշում-տանում
ինձ դէպի ծովի ափը լուսնեակ գիշերին:

Քս միտքը խորհնակ, կարուկ հեռա-
տես, իսկ ես զգացմունքի աշխարհում զօ-
րեց. Եւ մեր գերեզնի կասես փոխուած լի-

Նէին.— Ես դարձած հարս քնքոյշ, իսկ դժուարամարդ.

Յիշում ես դու, ընկեր, այն պարզ լուսնկայ զով դիշերը զարնան, երբ անցնում էինք Երկուսս թխանցուկ ծառերի միջով. ես լճու էի, մտահոգ, լուռ էիր և դու:

Հուռ էր լեզուս միայն սիրտս փոթորիկ, ալիկոծ, մըրկած ծովերու նման. իսկ քո սիրտը սիրտ չէր. կասես ժայռ լինէր անդորր, անդգայ լեռ քարի նման.

Ծովի ափ հասանք մենք այսպէս միասին ու նստանք հին աւեր բերդի պատերին. Այն հեռու ափերի հողմերը ահեղ ըշել էին բերել ալիքներ կայտառ:

Ալիքներն արևոր ճերմակ բաշերով, կարգ-կարգ իրար հոգից, Երկար շարքերով, որպէս գրոհի վազող զինուորի շղթայ, զարնում են իրար, ափերին հսկայ:

Երկնքի բարձունքից լուսինն էր շողում, յուզող ծովի եզրին ինձ-քեզ գուրդուրում: Իմ վառ սիրտս՝ փակուած թռչնակի նման՝ քո պաղ սրտի դիմաց յուզում, քարախում:

Իսկ դու լճու ու անշարժ՝ աչքերդ յառած շարեշար գրոհող ճերմակ շարքերուն՝ խորհրդաբար ցոյց տուիր գէպ յուզող հեռուն, ուր ջրերն ամենի ելնում են, իջնում:

Ջրերը կտտաղի ելնում են, իջնում. զարնում են, զարկում ու կրկին կանգնում. լեռներ են գոյանում անդունդներ բացում, ահեղակոչ ձայնով կրկին խորտակում.

Եւ ափերն անսասան կանգնած են յաղթ-յաղթ. ապառաժ քարերը պատնէշ են կապել ծովից վազող հզօր հարուածի առաջ. սրանք չեն խորտակում, կանգնուն մնացել:

Հա. ես այժմ հասկացայ քո միտքը միայն. և ուշ գրօսանքի խորհուրդը զաղտնի.— Հուժկու ալիքները կատաղի ծովի, դա՛ իմ սիրտն է յուզող փակուած վանդակում:

Իսկ ափերը խաղաղ ապառաժ քարով, դա՛ քո սիրտն է քարի, որին շատ զուր են զարնում կատաղի ալիքն իմ կրքի. զարնում են զարկում, կրկին խորտակում:

Կաց. յաճախ եմ տեսել ես, ծով, քո ափին, ուր ալիքը յամառ յաւէտ բաղխելով քո կրծքին ապառաժ, ճամբայ է բացել իր հոսանքի առաջ, հուժկու թեկերով:

Տես, որքան էլ լինիս դու յամառ աղջիկ. ամուր քան լեռ քարը չես լինի երբէք. եւ եո անվախ բաղխելով սրտիդ լարերուն կը բանամ և մի օր ճամբայ քո հոգում:

Ի՞նչ դու կուզես, որ արևից ու ծաղիկներից երգեմ քեզ:

Հա, նոր գարունն էր բացուել:

Այո, երկնս գարուն.— իմ պատանեկան օրերի առոյգ ու զուարթ գարունը, և պերճաշուք բնութեան արթնալու, ծաղիկ ու դալարի տօնը:

Երկու նորաբողոք գարուն քնքոյշ նազանքով ողջունում, գուրգուրում են իրար:

Եւ Այծեմնիկիս հետ՝ ջերմ արևի շողերով ողողւած՝ ո՛հ գարուն սիրուն. ճեմում եմ ազատ քո բիւր հրաշքով պճնուած արձակ գաշտերով, դալար լանջերով:

Եւ իմ մանկտի հոգին ամբողջովին օրհնե՛րդ է քո վեհութեան, քո փառքի առաջին:

Սիրտս արբեցած է քո՝ գեղով ու բոյրով:

Եւ այդ ի՞նչ գեղ ու քոյր է, որ բուրում է քեզանից. ո՞վ է դրել քո մէջ այդ անսպառ աղբիւրը անուշ բուրմունքի:

* * *

Եւ շուրջս եմ դիտում գմայլուած շրջապատի գեղեցկութեամբ, և իմ աչքերին ապշած, փողփողում են կոյտ-կոյտ ծաղիկ-

ներ փարթամ տարազով, գոյն-գոյն երանգով:

Նրանք իմ սիրտն են գերում իրանց տեսքի գեղանի հմայքով. և ես կախարդուած նրանց շքեղ արտաքին փայլով՝ վազում եմ դէպի մէկը, միւս, երրորդը... անյագ ծծում հոտոտում եմ նրանց, ապա կրծքիս շարեշար ծալքերով շարում:

Սակայն ինչո՞ւ չի յագեցնում սիրտս սիրաանշ. ինչո՞ւ ես նրանց մէջ չեմ գրտնում ցանկալի ծաղիկն իմ սրտի, որ գեղ ու բոյր էր տալիս նորեկ գարունքին:

Յանկարծ նայում եմ ցած և... Այծեմնիկիս հետ խոնարհ կուացած՝ ծունկ եմ իջնում մի համեստ տեսքով քնքշիկ ծաղկի առաջին:

Դա մանուշակն էր ընկած, արօրուած իմ ոտների տակ. դա վեհաշուք խոտերի ու ծաղիկների մէջ աննկատ թագնուած մամուշակն էր, որ լցնում էր բնութիւնը եղեմական բուրմունքով և գարունը դարձնում գարուն:

* * *

Անցան օրեր, տասնեակ տարիներ բուրեցին.

Իմ ծերութեան հասակի բարձրութիւնից, անդարձ անցած-գնացած օրերի մշուշապատ հեռուից դիտում եմ իմ կեանքի

հմայիչ գարնան յուշերը կրկին, և իմ փոթորկոտ մաքերի միջին, ոտներիս տակ ճըխլուտ, գարնան մանուշակի կողքին քո անուշ պատկերն եմ տեսնում, իմ Այծեմնիկ անդին:

Դու մի մանուկ աննաման, անմեղ, դու սիրում էիր ինձ քո մանկական հոգու մաքուր պարզութեամբ, գաղանարար ժպտում էիր երեսիս. դու իմ ծաղկաբողբոջ կեանքի գարունքին տալիս էիր և գեղ, և բոյր:

Ներիր ինձ, անմոռաց բնակր. ես չունեցոյ բեղ գնահատելու արժանիքը, և տարուած աշխարհի սին փառքով, կեղծիքով բնկայ խափուսիկ փայլի, պաճուճանքի յետեից ու... քեզ կորցրի:

Եւ իմ կեանքի փոթորկոտ ջրապտոյտի մէջ, կոշտ ու կոպիտ ոտներին տակին տըքորուած ու ջարդուած ես երկու ծաղիկ եմ տեսնում շարունակ՝ Այծեմնիկն ու մանուշակը:

Ա՛խ, դու կուգես, որ ես դարձեալ արեից ու ծաղիկներեց երգեմ քեզ:

Ո՛չ, չկայ այլեւ ինձ համար ոչ արե, ոչ ծաղիկ:



18027

2013

Handwritten text in a cursive script, likely a list or account, written on aged, stained paper. The text is arranged in several columns and includes various numbers and symbols, such as "946 8" and "1000".

